



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ՎԵՐՁԻՆ ՕԾՈՒ ԵՒ ՀԱՆԳԻՄ ՀՈԳԵԼՈՅՍ Տ. ՍՄԲԱՏ ԱՐՔ. ԼԱՓԱՃԵԱՆԻ

Մեծի Տան Կիլիկոյ Ս. Աթոռի երեց միաբաններէն հանգուցեալ Տ. Սմբատ Արք. Լափաճեանի Տան Կարգը տեղի ունեցաւ Կիրակի, 25 Յուլիս 2010ի երեկոյեան, Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարին մէջ: Եկեղեցականաց յատուկ Տան Կարգի արարողութեան հանդիսապետոց թեմիս բարեցան Առաջնորդ Բարձր Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան, մասնակցութեամբ Արեւելեան թեմի Առաջնորդ Բարձր Տ. Օշական Ս. Արք. Չօլոյեանի, Գերշ. Տ. Եփրեմ Ս. Արք. Թապագեանի, Գերպ. Տ. Միւրոն Ծ. Վրդ. Ազնիկեանի: Արարողութեան մասնակցեցան նաեւ Եջմիածնական թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովսան Ս. Արք. Տերտերեան, բարձրաստիճան Եկեղեցականներ՝ Գերշ. Տ. Վաչէ Ս. Արք. Յովսեփեան, Գերշ. Տ. Միքայէլ Ս. Արք. Աշապահեան, Գերպ. Տ. Պարետ Ծ. Վրդ. Երեցեան, Գերպ. Տ. Գեղամ Ծ. Վրդ. Զաքարեան, ինչպէս նաեւ քահանայից դասերը:

Տան Կարգի Եկեղեցական արարողութենեն Ետք, Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի ատենապետ՝ Տոքթ. Յակոբ Տիգրանեան, անգլերէն լեզուով ընթերցեց հանգուցեալ Սմբատ Սրբազնին կենսագրական գիծերը եւ իրագործումներուն ամփոփ Նկարագրականները կատարեց:

Այս տիսուր առթիւ, Մոնթրէալէն յատուկ կերպով Լոս Անճելը ժամանած, հանգուցեալ Սրբազնին եղօրորդին՝ Տիար Արամ Լափաճեան, իր եւ իր ընտանիքին կողմէ արտայայտուելով, ըսաւ թէ լուսահոգի Սրբազնը, իր հայ հոգեւորականի արժանիքներով, նուիրումի կեանքով եւ համեստ անձնաւորութեամբ՝ հսկայ մըն էր: Թեեւ կը սգանք, սակայն հոգեաւս միխթարուած ենք անոր ապրած հաւատքի եւ անձնիր նուիրումի կեանքով: Ան իհմա, ըսաւ Պրև. Լափաճեան, իր արարիչ Աստուծոյ լոյս ներկայութիւնը կը վայելէ ու աղօթող է մեր հոգիներու փրկութեան եւ աշխարհի խաղաղութեան համար:

Գերշ. Տ. Եփրեմ Ս. Արք. Թապագեան, Երկար տարիներու միաբանակից հոգեւոր Եղբայր, կենդանի վկայութիւններով վեր առաւ եւ ներկայացուց անոր Նկարագրին յատկանշանական գիծերը՝ որպէս բարեհամբոյր, բարեւեր հայ մարդ, գիտակից, պատրաստուած, հաւատացեալ եւ նուիրեալ հոգեւորական, որ Աստուծաշունչի լայն ծանօթութիւն եւ հմտութիւն ունենալով, իր քարոզները եւ հոգեւոր

պատգամները կը համեմեր սրամիտ մտաւորականի խոհուն խօսքերով եւ կենդանի, դիպուկ օրինակներով:

Երկուշաբթի, 26 Յուլիս 2010ի առաւօտեան, Ներկայութեամբ հոժ բազմութեան, յընթացս Ս. Պատարագի, տեղի ունեցաւ վախճանեալ Սրբազն Հօր Վերջին Օծման եւ թաղման արարողութիւնը:

Ս. Խաչ Մայր Տաճարի Յոգեւոր Յովիւներէն Արժ. Տ. Աշոտ Թինյ. Գամպուրեան, հայերէնով ընթերցեց լուսահոգի Սրբազնին կենսագրութիւնը:

Պատարագին եր Թեմիս Բարեցան Առաջնորդը: Աղօթակից եւ մասնակից էին Արեւելեան Թեմի Առաջնորդ Բարձր Տ. Օշական Ս. Արք. Չօլոյեան, Ծոցի Երկիրներու Կաթողիկոսական Փոխանորդ՝ Բարձր. Տ. Կորիւն Ս. Արք. Պապեան, Գերշ. Տ. Եփրեմ Ս. Արք. Թապագեան, Գերշ. Տ. Վաչէ Ս. Արք. Յովսէփեան, Յայ Կաթողիկէ Եկեղեցւոյ Առաջնորդ Արիի. Տ. Մանուել Եպս. Պաթագեան եւ հոգեւոր հայրեր, Միսիթարեան միաբան հայրեր, Ասորի Ուղղափառ Եկեղեցւոյ Առաջնորդ Գերշ. Եուճին Քափլան Արքեպիսկոպոսը, Յայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան հովիւ Վերպ. Յովսէփ Մաթոսեան, քահանայից եւ սարկաւագաց դասերը: Ներկայ էին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգ. Կեդրոնական վարչութեան Ներկայացուցիչ՝ Տիար Խաժակ Տիգինեան, Ազգ. Վարչութեան եւ Կրօնական Ժողովի անդամներ, Թեմիս ծխական Եկեղեցիներու հոգաբարձական, Երեսփոխանական եւ տիկնանց Միութիւններու կազմեր, Յ.Յ.Դ. Կեդրոնական կոմիտեի, Մոնթեպելլոյի «Դրո» Կոմիտեի, ՅՕՄի կեդրոնական եւ շրջանային Վարչութիւններու Ներկայացուցիչներ, Յ.Մ.Ը.Ս.ի Շրջ. Վարչութեան Ներկայացուցիչներ, Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի սգակիր համայնքը եւ բազմահարիւր վշտակից հաւատացեալներ:

«Ողջոյն» առաջ, սաղմոսներու ընթերցումներու առաջնորդութեամբ, քահանայ հայրեր, հոգելոյս Տ. Սմբատ Արք. Լափաճեանի դագաղը առաջնորդեցին դեպի սուրբ խորան. պատարագիչ Առաջնորդ Սրբազնը սրբալոյս միւռոնով օծեց ճակատը եւ աջ ձեռքը լուսահոգի Տ. Սմբատ Արք. Լափաճեանին, ապա հոգեւոր հայրեր դագաղը դարձուցին չորս ուղղութեամբ, իսկ սրբազն հայրեր »Վերջին Ողջոյն«ի յուզիչ Երգերը Երգեցին, խորհրդանշելով հոգելոյս Սրբազնին Վերջին հրաժեշտը՝ Եկեղեցւոյ, հոգեւոր դասուն եւ Ժողովուրդին:

Գերշ. Տ. Կորիւն Ս. Արք. Պապեան ընթերցեց Մեծի Տանն Կիլիկիոյ Գահակալ, Ն.Ս.Օ.Ս.Ս. Արամ Ա. Վեհափառ հայրապետին այս առթիւ յղած ցաւակցական գիրը, ուր Վեհափառ հայրապետը վեր կ'առներ հոգելոյս Սրբազնին արդիւնաւոր ծառայութիւնները՝ Մեծի Տանն Կիլիկիոյ ճամբով հայ Եկեղեցւոյ ու հայ Ժողովուրդին: Վեհափառը կը շեշտէր Սմբատ Սրբազնին հոգեւոր արժանիքները, անոր Նկարագրի բարութիւնը, անկեղծութիւնը եւ աստուածաշնչական եւ հոգեւոր գիտելիքներու հմտութիւնը, մասնաւանդ Երախտագիտութիւնը հանդեպ այս հաստատութիւններուն, ուր հասակ առած, ուսանած եւ արժանացած բարձր տիտղոսներու եւ պաշտօններու:

Իր դամբանական խօսքով, պատարագիչ Առաջնորդ Սրբազնը անդրադարձաւ որ այսօր, Յայց. Առաքելական Եկեղեցին սուգի մեջ է եւ

հողին կը յանձնէ եկեղեցւոյ ու հայ ժողովուրդին նուիրեալ եւ հարազատ մեկ զաւակը: Ան ամփոփ գիծերու մեջ ներկայացուց հանգուցեալ Սմբատ Սրբազանի կեանքի գլխաւոր հանգոււանները: Ան նշեց, որ հանգուցեալ Սրբազանը ակնածանը առթող անհատ էր ու հոգեւորական, որ իր կեանքը, հոգին եւ սիրտը ընծայաբերեց մեր եկեղեցւոյ ու ժողովուրդին: Առաջնորդ Սրբազանը ըսաւ, որ հոգելոյս Սրբազանը Աստուծոյ խոնարի ու հաւատարիմ մեկ ծառան էր, որ բոլորին հետ հաղորդ էր ու կարեկից: Նուիրեալ հոգեւոր առաջնորդ մըն էր որ միշտ ներկայութիւն եղաւ եկեղեցւոյ ու ծխականներու կեանքին մեջ, ուրախութեան թէ տրտմութեան պահերուն: Ան իր հօսի զաւակներուն համար ընտանիքի հարազատ անդամ մըն էր: Աւելին, ան իբրեւ Կրեմտեան մեր Թեմի հիմնադիր Առաջնորդը, բանալի դերակատարութիւն ունեցաւ Թեմի կազմակերպման ու տարածման աշխատանքներուն մեջ, յատկապէս եկեղեցիներու ու դպրոցներու ճամբով: Ան նաեւ սիրելի ուսուցիչ մըն էր, որուն ուսուցմունքը խոր հետքեր թողած են իր աշակերտներուն կեանքերուն մեջ, Լիբանանին մինչեւ Միացեալ Նահանգներ: Ան նաեւ «Կենաց Բան»ին պատգամներուն հաւատաւոր մեկ քարոզիչն էր, Քրիստոսի խօսքին տարածիչը եւ հաւատացեալին հոգիին մեջ սերմանողը: «Մենք մեզ առանձնաշնորհեալ կը զգանք, որ հոգելոյս Սմբատ Սրբազանին պէս անձնաւորութիւն մը եւ առաջնորդ մը ունեցած ենք մեր Թեմին մեջ, Վայելած ենք անոր աւելի քան քառասուն տարիներու ծառայութիւնը, մեծապէս երախտապարտ ենք իրենք, Թեմիս բարգաւաճման ու զարգացման մեջ ունեցած ներդրումին, ինչպէս նաեւ ծխական համայնքի կենսաւորման համար», ըսաւ Առաջնորդ Սրբազանը, ընդգծելով, որ ան իր ետին կը թողու հսկայական ժառանգութիւն մը եւ աւանդ մը, որոնք պիտի մնան անմոռանալի: «Իր քաղցր յիշատակներուն պէս, իր ազդեցութիւնն ալ պիտի մնայ անկորսչելի», եզրափակեց Առաջնորդ Սրբազանը:

Դպրաց դասի «Ողջոյն տուք միմեաց» երգեցողութեան ժամանակ, հոգեւորականաց դասու անդամները, նուիրապետական կարգով եւ յուզումնախառն զգացումներով՝ վախճանեալ Սմբատ Սրբազանին ստանալու համար վերջին ողջոյնը, բարձրացան սուրբ խորան եւ երկիրածութեամբ համբուրեցին անոր օծեալ ճակատն ու աջը: Ազա քահանայ հայրեր զգուշութեամբ եւ երկիրածութեամբ վախճանեալ Սրբազանը իր դագաղով գետեղեցին եկեղեցւոյ ատեանին մեջ եւ առիթ տրուեցաւ որ հաւատացեալներ մօտենան, իրենց վերջին յարգանքը մատուցանեն վախճանեալ Սրբազանին եւ ստանան անոր վերջին օրինութիւնը:

Յաւարտ սուրբ պատարագին, հանգուցեալ Սրբազանին Եպիսկոպոսական հանդերձանքները փոխարինուեցան վանականի սեւաթոյր վերարկու-վեղար-փիլունով եւ աղօթքներու ու շարականներու երգեցողութեամբ, եկեղեցականաց ու դպրաց թափօրը եկեղեցին դրւս գալով, գերեզմանի թաղման արարողութիւնը կատարելու համար յառաջացաւ եկեղեցւոյ կողքին յատուկ կերպով փորուած եւ պատրաստուած հողակոյտին՝ հանգուցեալ Սրբազանին անշնչացած մարմինը ամփոփելու: Առաջնորդ Սրբազանին արտասանած հողի օրինութեան աղօթքն եւ գերեզմանի կնքումն ետք, եկեղեցականներ հողով

ծածկեցին գերեզմանը: Լուսահոգի Սմբատ Սրբազանի թարմ շիրիմին շուրջ համախմբուած սգակիր ժողովուրդը երգեց »Կիլիկիա« մաղթերգը:

Ապա, Ներկաներ Ս. Խաչ Մայր Տաճարի հոգաբարձութեան կողմէ հրաւիրուեցան «Բաղրամեան» սրահ, ի յարգանս հանգուցեալ Սմբատ Սրբազանի հոգույ խաղաղութեան համար կազմակերպուած հոգեճաշին:

Տերուսական աղօթքն՝ «Յայր մեր» են եւ նևցելոց հոգուց խաղաղութեան համար արտասանուած յատուկ աղօթք եւ հոգեճաշի օրինութենեն Ետք, Ս. Խաչ Մայր Տաճարի ատենապետ եւ հոգեճաշի հանդիսավարը՝ Տոքթ. Յակոբ Տիգրանեան, բեմ հրաւիրեց Արեւելեան թեմի Առաջնորդ Բարձր. Օշական Ս. Արք Զօլոյեանը՝ սրտի խօսք արտասանելու: Օշական Սրբազանը անդրադարձաւ հոգելոյս Սմբատ Սրբազանին նկարագրի պարզութեան, բարութեան եւ հոգեւոր արժեքներու ու յատկապես աստուածաշնչական ճշմարտութիւններու, Թրիստոսի եւ քրիստոնեական ուսուցումներուն հանդէայ անոր անմասցորդ նուիրուածութեան ու հաւատքին: Ո՞չ միայն հաւատաց, ըսաւ Օշական Սրբազան, այլեւ ապրեցաւ, քարոզեց, վարդապետեց եւ ամբողջ կեանք մը զոհաբերեց Աստուծոյ:

Ցաւակցական գիր մը հասած էր Պեյրութի Յայկազեան Յամալսարանի նախազահ Տոքթ. Փոլ Յայտոսթեանեն, որ կը նշեր, թէ համալսարանը, իր հիմնադրութեան 55րդ տարեդարձին առիթով նախատեսուած հանդիսութեան, քանի մը ամիս Ետք, կը ծրագրեր պատուել հոգելոյս սրբազանը, որ համալսարանի առաջին շրջանաւարտներեն էր: Գնահատագիր-ցաւակցական մը հասած էր նաեւ պետական երեսփոխան Զարոլ Լուէն:

Լուսահոգի Սրբազանին կեանքին կարեւոր հանգրուաններուն եւ անոր հոգեւոր գործունեութեան մասին լուսապատճենի կարծ Ներկայացումեն առաջ, խօսք առիս Լու Անճելըսի քաղաքապետական խորհուրդի անդամ՝ Փոլ Գրիգորեան, Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսեփեան, Յ.Յ. Կերոբուսական Կոմիտէի Ներկայացուցիչ Տիար Ժան Գոսագեան, Ազգ. Կերոբուսական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիքիճեան, Ազգ. Վարչութեան Ներկայացուցիչ՝ Տիար Լեւոն Կիրակոսեան, եւ Ս. Խաչ Մայր Տաճարի Տիկնանց Միութեան Ներկայացուցիչ Տիկ. Ըսար Պաղտասարեան, որոնք ցաւ յայտնեցին ու վշտակցեցան լուսահոգի Սմբատ Սրբազանի վախճանման առիթով: Անոնք ցաւակցութեան յայտնեցին Վեհափառ Յայրապետին, Առաջնորդ Սրբազանին եւ Յոգեւորականաց Դասուն:

Առաջնորդ Սրբազանին եւ Ազգային Վարչութեան տնօրինումով, եւ գործակցութեամբ Ս. Խաչ Մայր Տաճարի հոգաբարձութեան, Յոգելոյս Տ. Սմբատ Ս. Արք. Լավաճեանի յիշատակը յաւերժացնելու նպատակաւ հիմնադրամ մը հաստատուած է »Գերշ. Տ. Սմբատ Ս. Արք. Լավաճեան« անուամբ:

Լոյս մշտնշենի լուսահոգի Տ. Սմբատ Ս. Արք. Լավաճեանի հոգուոյն:

Խունկ ու աղօթք եւ Երկնային հանգիստ, անոր յոգնաբեկ աճիւններուն:

Յիշատակն արդարոյն օրինութեամբ եղիցի:

Մ. Շ. Վ. Ազնիկեան

## **ARCHBISHOP SUMBAT LAPAJIAN LAID TO REST**

On Saturday, July 17<sup>th</sup>, 2010, one of the longest serving members of the Catholicosate Brotherhood and the first Prelate of the Western Prelacy H.E. Archbishop Sumbat Lapajian entered eternal rest at Ararat Home in Mission Hills.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, presided over the wake service which was held on the evening of Sunday, July 25<sup>th</sup>, at Holy Cross Cathedral in Montebello. Participating in the service were Prelate of the Eastern Prelacy H.E. Archbishop Oshagan Choloyan, H.E. Archbishop Yeprem Tabakian, Very Rev. Fr. Muron Aznikian, Primate of the Western Diocese H.E. Archbishop Hovnan Derderian, H.E. Archbishop Vatche Hovsepian, H.E. Archbishop Mikayel Achabahian, Very Rev. Fr. Baret Yeretsian, Very Rev. Fr. Kegham Zakarian, and clergy members.

Following the service, the late Archbishop's English biography was read by Holy Cross Cathedral Board of Trustees Chair Dr. Hagop Dikranian.

Archbishop Tabakian paid tribute to Archbishop Lapajian, recalling his life and service to the Armenian Church.

Archbishop Lapajian was laid to rest at Holy Cross Cathedral on the morning of Monday, July 26<sup>th</sup>. The Prelate conducted the funeral mass, with the participation of H.E. Archbishop Oshagan Choloyan, Catholicosate Vicar of Kuwait and the Gulf H.E. Archbishop Gorun Babian, H.E. Archbishop Yeprem Tabakian, H.E. Archbishop Vatche Hovsepian, Eparch of the Catholic Church H.E. Bishop Manuel Batakan, Mekhitarist Fathers, head of the Syriac Orthodox Church H.E. Archbishop Eugene Kaplan, Minister of the Armenian Evangelical Union of N. America Rev. Joe Matossian, clergy, and deacons. Among the over four hundred faithful in attendance were Catholicosate Central Executive member Mr. Khajag Dikjian, Executive and Religious Councils' members, delegates, Boards of Trustees and Ladies Auxiliary members, and representatives of the ARF, ARS, and Homenetmen.

The funeral mass began with the reading of the late Archbishop's Armenian biography by parish pastor Rev. Fr. Ashod Kambourian.

Prior to the Kiss of Peace, and with the reading of Psalms, the casket was led to the altar for the Extreme Unction service, during which the Prelate anointed the forehead and right hand of Archbishop Lapajian. The casket was then rotated four times to face the four corners of the world, symbolizing the last greetings of the late Archbishop to the church, clergy, and faithful.

Archbishop Babian then read the condolence letter of H.H. Catholicos Aram I, in which he exalted the virtues of Archbishop Lapajian, remembering him as a kind, compassionate, and humble clergyman.

The Prelate delivered the eulogy, exalting Archbishop Lapajian as a remarkable man and clergyman who devoted his life, heart, and soul to working for our Lord.

He remembered him as a humble and faithful servant of God, a simple and kind man who related to every one and empathized with every one, thus earning the love, respect, and admiration of the community. He spoke of him

as a dedicated son of the Armenian church and nation, whose life and service bore witness to his deep love and devotion to our Lord and our church. He was a devoted pastor and spiritual leader, who was always there, in good times and in bad, and who was more like a family member to many in his congregation. He was an effective leader, who as the first Prelate of the Western Prelacy was instrumental in the establishment of a number of parishes and schools. He was a talented teacher who influenced the lives of countless students from Lebanon to the United States, and an exceptional preacher of the Word of God who dedicated his life to spreading the word of Christ, teaching it, and instilling it in his parishioners. "We are privileged to have had a clergyman like Archbishop Lapajian serve within the Western Prelacy for over four decades, and we are ever thankful for his many accomplishments and contributions to the advancement of our Prelacy and to the spiritual nourishment he provided to our community. He led a life of great service and leaves behind a legacy which will not be forgotten. Through our many fond memories, his influence will continue", said the Prelate.

As the choir sang during the Kiss of Peace, clergy members one by one ascended the altar and approached the casket to pay their final respects by kissing the late Archbishop's forehead and right hand. Clergy members then joined together to lower the casket from the altar to allow the faithful the opportunity to pay their respects as well.

Accompanied by prayer and the singing of hymns, the casket was led to the courtyard of the church. Given that Archbishop Lapajian spent a large part of his life serving the Holy Cross parish community, per his wishes and by the authorization of H.H. Catholicos Aram I, he was interred in the courtyard of Holy Cross Cathedral.

The service concluded with the singing of the Cilician anthem, after which the faithful to a memorial luncheon at "Bagramian" Hall, hosted by the Holy Cross Board of Trustees.

Following the opening prayer, Dr. Hagop Dikranian invited Archbishop Choloyan to offer his remarks. He reflected on the humility, goodness, and simplicity of Archbishop Lapajian, as well as his unwavering faith and devotion to our Lord Jesus Christ.

Prior to a slide show chronicling the life and works of Archbishop Lapajian, L.A. City Council member Paul Krekorian, Archbishop Vatche Hovsepian, Mr. John Kossakian (representing the ARF Central Committee), Central Executive member Mr. Khajag Dikjian, Mr. Levon Kirakosian (representing the Executive Council), and Mrs. Knar Baghdassarian (representing Holy Cross Cathedral Ladies Auxiliary) were invited to convey their sympathies. Letters of condolence from State Senator Carol Liu and President of Haigazian University Rev. Paul Haidostian were also read.

In memory of the late Archbishop, the "Holy Cross Archbishop Sumbat Lapajian Memorial Fund" has been established.

May his memory remain ever blessed.